Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Պ-463-14.03.2014,16.05.2014-ՄԻ-010/2

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

# ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ և ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հոդված 1.* «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-410-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 28.1-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր պարբերությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

<<Այն կուսակցությունները, որոնց ակտիվների արժեքը սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը գերազանցելը պայմանավորված է եղել հաշվետու տարում կուսակցության հաշվեկշռում առկա անշարժ եւ շարժական գույքի արժեքով եւ կուսակցությունն այդ կապակցությամբ արդեն մեկ անգամ լիազոր մարմին ներկայացրել է աուդիտորական եզրակացություն, հաջորդող հաշվետու տարիներին ազատվում է աուդիտորական եզրակացություն ներկայացնելու պարտականությունից, եթե նախորդ հաշվետու տարվա համեմատությամբ նրա հաշվեկշռում անշարժ եւ շարժական գույքի մասով փոփոխություններ տեղի չեն ունեցել: Կուսակցության հաշվեկշռում անշարժ եւ շարժական գույքի մասով փոխությունների դեպքում կուսակցությունը պարտավոր է հաշվետվությունը ներկայացնել սույն օրենքով սահմանված կարգով աուդիտորական եզրակացության հետ միասին, եթե հաշվետու տարում իրականացրած բոլոր գործարքների գինը գերազանցել է սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը:>:

*Հոդված 2.* Օրենքի 28.1 հոդվածի 2-րդ մասը վերջից լրացնել հետեւյալ բառերով. <եթե պետական բյուջեից ֆինանսավորումը հաշվետու տարում գերազանցել է նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը>:

*Հոդված 3.* Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>

ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների վերաբերյալ

| | Առաջարկության հեղինակ | Նախագծի փոփոխվող հոդված | Առաջարկության բովանդակություն | Եզրակացություն |
|---|---|---|---|---|
| 1. | ՀՀ կառավարություն | 1-ին հոդվածում | <կետում <արժեքը> բառը փոխարինել < արժեքի փոփոխությունը հաշվետու տարում> բառերով> բառերը փոխարինել <մասը լրացնել նոր պարբերությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.<br><<Այն կուսակցությունները, որոնց ակտիվների արժեքը սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը գերազանցելը պայմանավորված է եղել հաշվետու տարում կուսակցության հաշվեկշռում առկա անշարժ եւ շարժական գույքի արժեքով եւ կուսակցությունն այդ կապակցությամբ արդեն մեկ անգամ լիազոր մարմին ներկայացրել է աուդիտորական եզրակացություն, հաջորդող հաշվետու տարիներին ազատվում է աուդիտորական եզրակացություն ներկայացնելու պարտականությունից, եթե նախորդ հաշվետու տարվա համեմատությամբ նրա հաշվեկշռում անշարժ եւ շարժական գույքի մասով | Առաջարկությունն ընդունվել է |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | փոփոխություններ տեղի չեն ունեցել: Կուսակցության հաշվեկշռում անշարժ եւ շարժական գույքի մասով փոփոխությունների դեպքում կուսակցությունը պարտավոր է հաշվետվությունը ներկայացնել սույն օրենքով սահմանված կարգով աուդիտորական եզրակացության հետ միասին, եթե հաշվետու տարում իրականացրած բոլոր գործարքների գինը գերազանցել է սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը:>> բառերով: | |
| 2. | **ՀՀ կառավարություն** | 2-րդ հոդվածում | <հրապարակման օրվանից> բառերը փոխարինել <հրապարակմանը հաջորդող օրվանից> բառերով: | Առաջարկությունն ընդունվել է |
| 3. | **Ստեփան Դեմիրճյան Գագիկ Ջհանգիրյան Արամ Մանուկյան Լյուդմիլա Սարգսյան** | Ավելացնել հոդված 3. | Սույն օրենքի 28.1 հոդվածի 2-րդ մասը ճանաչել ուժը կորցրած | Առաջարկությունն մասնակի ընդունվել է: Առաջարկվում է նշյալ հոդվածի 2-րդ մասը վերջից լրացնել հետեւյալ բառերով <եթե պետական բյուջեից ֆինանսավորումը հաշվետու տարում գերազանցել է նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը> |